ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 227

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի , հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը՝ **որոշում եմ**

1. Համաձայնեցնել կառուցապատող՝«Հայաստանի էլեկտարական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն գ. Վերին Պտղնի , Նորավան թաղամաս, 1-ին փողոց թիվ 10 հասցեում Արթուր Սիմոնյանին պատկանող տարածքի 0,4 կվ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարություն սկսելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ.սեպտեմբերի 01
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 228

ԱՍՅԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Ասյա Թովմասյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-1 ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Ասյա Թովմասյանին տալ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021 թ. սեպտեմբերի 02
գ.Վերին Պտղնի